


սեռական էր եւ թէ ուղղական: Այս նոյն հիմքով է, որ վերականգնում եմ «քիթկալ» եւ «ասեղաբուն» ձեւերը եւ որակում եմ իբր «վաղեմի» ձեւեր, առանց յուսալու գտնել այդ «վաղեմի» ձեւերն անվթար կերպարանքով մեր հին ու նոր լեզուի մէջ: Երբ ես տեսնում եմ, որ այսօրուան «հաւատալ» ձեւն ունի իր լիահնչիւն «հաւատալ» ձեւը, որ պահուած է անկորուստ, ես վստահութեամբ ասում եմ, որ «քիթկալ» եւ «ասեղաբուն» ձեւերը վաղեմի կերպարանքն են «քիթկալ» եւ «ասղաբուն» ձեւերի: Լեզուի պատմութիւնն ու սղման եւ չքացման անհամար դէպքերը ինձ իրաւունք են տալիս այս տեսական պնդումն անելու: Վերականգնած ձեւերը կարող էին լինել այսքանը բաւ է լեզուախոյզին: Աւելին անհնարին է պնդել ստուգապէս:

Ն. ԱՂԲԱԿԻՆ



ՆԵՐՈՆ ԿԸՅՍԵՐ ԸՐԵԻՒԼԵՐՆ ԳՐՂԱԳԸ-ԿՆՈՒԹԻՒՆԸ

ԳՐ. ՎԵՐՆԵՐ ՀՈՒՐ

(Շարունակութիւն):

3. Պարթեւական պատերազմը եւ խաղաղութիւնը:

Հայաստանի թագաւորը 60ի գարնան Ատրպատականի վրայ յարձակում գործեց, եւ այդ՝ մերձաւոր արեւելքի երկու մեծ պետութիւններու միջեւ նոր մարտի մը գրգռւածան հղաւ: Վաղարշակ ազդանշանը հասկցաւ եւ ըմբռնեց թէ վճռական ժամը հնչած էր: Հոռոմի սպառնալիքը գինքն երկընտրանքի մը առջեւ կը դնէր. պէտք էր կամ Վրկաններու հետ խաղաղութիւն կնքել, որ միայն վերին սատրապութիւններու վերջին մնացորդներու կորուստի գնով հնարաւոր էր, եւ կամ Հոռոմի հետ համաձայնութեան մը գալ, որ միայն Հայաստանէ հրաժարելով կարելի պիտի ըլլար: Երկար դեղեւումէ վերջը, Տրդատի եւ Ատրպատականի Մոնորազ թագաւորին ազդեցութեան տակ՝ արիական որոշումը տուաւ արեւելքէն հրաժարիլ եւ Հոռոմի դէմ պատերազմ մղել: Այս որոշումը քաղաքագիտօրէն բացարձակապէս ուղիղ էր. եթէ յաջողէր արեւմուտքի հզորագոյն ստիւրը յաղթահարել, այն ատեն Վրկանեան անկախութեան վերջին ժամը հնչած էր: Որովհետեւ այդ յաջողութիւնը

չունեցաւ, 60—61ի ձմրան խաղաղութիւն պետութեան բաժանման սկզբնակէտը դաժաւ. սակայն նոյն իսկ նպատաւոր ելքը պարագային այդ բաժանումը՝ ժամանակը ընթացքին անխուսափելի էր ⁶⁰:

Առանց անդրադոյն պատերազմալի յայտարարութեան Վաղարշ 61ի գարնան Հայաստանի դէմ կռիւը սկսաւ ⁶¹. Տիրաւորութեան առաջ՝ ուրեմն Մարտի վերջերի Տրդատ, Ատրպատականի Մոնորազ թագաւորը եւ մեծ արքային թիկնապահներու ուղևորը՝ Մոնեսէս մինչեւ Տիգրանապոլիս յառաջացան, որպէս զի այդ կարեւոր դիրքը յարձակումով գրաւեն: Պարթեւական գլխաւոր զորարանակը Մծրնի քով համախմբուցաւ, որպէս զի երկու գետերուն նուազութեամբ՝ մէկ մասը Հայաստան մտնէ եւ մի կամ յարձակումով եւ կամ պաշտպանութեանով Եփրատի գիծը ապահովէ ⁶³:

Կորբուզոն երկար ժամանակէ ի վեր ուղևորական ծրագրերը պատրաստած եւ կարեւոր միջոց ձեռք առած էր ⁶⁴: Արտաւոր 60 տարւոյն աչնան ⁶⁵ երկու յոռեգոյն դէմները՝ Գ. Սկիւթականը եւ Ժ. Թաւազարը ⁶⁶ Տիգրանակերտի ուղեպահ արիկ ամրութիւններու մէջ հաստատուէին: Ասոնք՝ Վետաիոս Բոլանոսի եւ Լ. Բուրուզանոս Սեվերոսի առաջնորդութեան տակ 61ի գարնան՝ Տրդատի եւ անոր ատրպատական օգնական գունդին, որ աւելի կիրթ բերդամարտի մէջ, բոլոր ջանքերն ի դէմ հանեցին եւ այսպէս Պարթեւներու առաջնորդ կերպով փակեցին Հայաստանի ընդհանուր մուտքի դռներուն ճամբան ⁶⁷:

Զորավարն այս միջոցին երեք ընտրիկ դէմներով՝ Գ. Գաղղիական, Զ. Երկաթե պատ եւ Ժ. Փրետենեան, Եփրատի մտեան եղեւթին վրայ ամուր դիրք մը

⁶⁰ Տես վարը Գլ. Ա, յօդ. 4:

⁶¹ Տակիտ. Տ. ԺԵ. 2:

⁶² Գիտարին ժամանակագրութեան մասին Klio ԺԹ:

⁶³ Կորբուզոն իւր տեղեկատուութեան մէջ Պետոսի գործարարութեան յետոյ խմբագրութեան կը պնդէ իր ձեռք առած միջոցներուն պաշտպանական իսկ թշնամոյն ծրագրերնուն յարձակողական նկարագրին վրայ (Տակիտ. Տ. ԺԵ. 4): Նորապայտեան կանգնեցնելու հոս Տակիտոսի հետեւած են, վարը պիտի տեսնենք թէ այս պարագայէ պաշտպանութեան պատրուակ մըն էր:

⁶⁴ Տակիտ. Տ. ԺԵ. 3:

⁶⁵ Ասոնք Մարտին արդէն իրենց գիրքերով վրայ էին:

⁶⁶ Հէնտրբուքն, Ներոն, 180, ուղիղ կը գրեն ասոնք Պետոսի լեզուներն էին:

⁶⁷ Տակիտ. Տ. ԺԵ. 4:

ւած էր, որ թէ՛ յարձակողականի եւ թէ՛ պաշտպանողականի համար միապէս նպատաւոր ընտրուած էր: Կորբուզոնի ուղևորական ծրագրերը թէ՛ զօրամասերու բաժանումէն եւ թէ՛ յետագայ՝ մեծ արքային ուղարկուած՝ պատգամէն ⁶⁸ ակնյայտնի կը տեսնուին: Պաշտպանողական տեղը թեւը Տիգրանակերտի քով՝ թշնամոյն դէպի Հայաստան ծրագրած յարձակողականի իր առաջին գործին մէջ պիտի կասեցնէր: Իսկ միւս երեք՝ միջին Եփրատի մօտ եղող յաղթավարժ լեզեոնները յաջողութեան լաւագոյն յոյսերով՝ Միջագետքէն պիտի կրկնէին Կրետոսի արշաւը:

Պատերազմը սկսելէ առաջ Կորբուզոն Հոռոմի առաջարկած էր հայկական բանակին համար փոխարեւոր պատուիրակ մը կարգել ⁶⁹, վասն զի ինքն ի վիճակի չէր Եփրատի մօտ գլխաւոր բանակին հրամանատարութեան հետ միանգամայն Հայաստանի պաշտպանութիւնը վարել: Կորբուզոնի այս քայլը շատ զարմանալի երեւցած է եւ զանազան մեկնութիւններ փորձուած են: Հոռոմի մէջ խմբակ մը անոր այս վարմունքը կը ստղծանէր, վասն զի կը համարէր թէ Կորբուզոն Հայաստանի նուաճումով վաստկած իր համբաւը չէր ուզեր վտանգել՝ պարթեւական ամբողջ ուժին դէմ նոյն երկրին դժուարին պաշտպանութիւնը իր վրայ առնելով ⁷⁰: Սակայն ինչպէս տեսնուի ռազմական ծրագրին կերպաւորումն այսպիսի ենթադրութիւն մը թոյլ չի տար: Նոր հեղինակներն մեծ մասով ասոր շարժառիթը կը համարին Ներոնի հզոր զօրավարներու դէմ սնուցած դիւրադրիտ կասկածը եւ կենթադրեն թէ Կորբուզոն իր պետին այս ունակութիւնը նկատի առնելով բաժանման առաջարկն ըրած է ⁷¹: Մոմսէն այս շարժառիթին աւելի հաւանական եղանակաւորում մը կու տայ, մատնանիչ ընելով այն իրական վտանգը, որ արքունի տան համար կրնար ծագիլ, եթէ արեւելեան ամբողջ բանակը ոչ-իշխանագուն կուսակալի մը ձեռքն մնար ⁷²: Սակայն Հէնտրբուքն ⁷³ հետ պէտք է ընդունիլ, թէ հրամանատարութեան համար զօրավարին տուած պատճառն

⁶⁸ Տես քիչ մը ետքը:

⁶⁹ Տակիտ. Տ. ԺԵ. 3:

⁷⁰ Տակիտ. Տ. ԺԵ. 6:

⁷¹ Rawlinson, 274 յՆ., Merivale, Ե. 340:

⁷² Հոռոմ. Պոմ. Ե. 388:

⁷³ Ներոն, 181:

է միակ ուղիղը: Գլխաւոր բանակէն այնչափ հեռաւորութեան վրայ անկախ գործող հիւսիսային զօրաբաժինը, որ իրեն մասնաւոր պաշտօնն ունէր, իրապէս կը կարօտէր ինքնակաց եւ կենդրոնացած վարչութեան մը: Երկու լեզեոնական պատուիրակութիւններու միասնական վերին հրամանատարութիւնը պարզապէս առժամանակեայ կրնար ըլլալ, որուն կարելի եղածին չափ փութով պէտք է վերջ տրուէր, Հայաստանի համար փոխարեւոր պատուիրակ մը առաքելով: Նորեկը, ինչպէս դէպքերու ընթացքէն կը տեսնուի, Կորբուզոնի ծրագրերնուն գործադրելը միայն պիտի ըլլար եւ հայ սահմանները պիտի ապահովէր, մինչ Ատրիքի բանակը յարձակողական գործով մը դէպի Միջագետք պիտի յառաջանար:

Գործողութեան ձեռնարկելէ առաջ հոռոմէացի հրամանատարն անգամ մ'եւս փորձեց բանակցութեան ճամբան՝ հակառակ պարագային բռնամիջոցներ սպառնալով ⁷⁴: Մծրն պատգամաւոր մը ուղարկեց, որ հայ հողին պարպումը պիտի պահանջէր բացարձակապէս. իսկ եթէ պարթեւ արքայն այս պահանջը մերժէր, հոռոմէական բանակն անյապաղ պիտի անցնէր սահմանը:

Վաղարշ դիտակից էր, թէ ինչ պիտի արժէր իրեն սպառնացուած հոռոմէական յարձակողականը. իր լաւագոյն գունդերն առանց յաջողութեան յոյսի մը Տիգրանակերտի առջեւ դամուած էին, իսկ այրուծին, որ իր բանակին գլխաւոր ուժը կը կազմէր, մեծապէս տուժած էր իր կարողութեան մարտնչներու արշաւէ մը, որոնք երկվարներու կերն ոչնչացուցած էին: Այս պարագաներու մէջ ասորական ընտիր լեզեոններու յարձակողականը դէպի Մծրն յաջողութեան ամէն երաշխաւորութիւն կը կրէր իր մէջը:

Եթէ թագաւորը հոռոմէացի զօրավարին պայմանները չընդունէր, գինուորական ծանր պարտութիւն մը անխուսափելի էր: Արշաւանքը սկսելէն առաջ ուղարկուած պատգամաւորութեանն ուղիղ եզրակացուց նա թէ Կորբուզոն պատրաստ էր բանակցութեան մտնելու. ուստի հրամայեց որ Տիգրանակերտի պաշարուն բարձուի եւ Մծրնի բանակը լուծուի. միանգամայն յայտարարեց, թէ պատրաստ է Հոռոմ պատգամաւորութիւն մը առաքելու, որպէս զի կայսեր խաղաղու-

⁷⁴ Տակիտ. Տ. ԺԵ. 5:

թեան ինչիւրք ներկայացնէր, այն պայմանով, որ Հայաստանի դահլը Տրդատի տրուէր: Կորբուզոն այս պայմաններով զինադադար կնքեց ու ինքն ալ իր ուժերը Հայաստանէն ետ քաշեց. ասոր անհրաժեշտ հետեւութիւնն եղաւ Տրդատի թագաւորին անկումը: Այսպէս ուրեմն կ'երեւար թէ հոռոմէական կառավարութեան տարիներէ ի վեր հետապնդած նպատակը ձեռք բերուած էր, առանց զինուորական ուժի ազդու միջամտութեան եւ միայն սպառնալիքի ազդեցութեամբ:

Սակայն Կորբուզոնի այս ընթացքը թէ՛ հիներէն եւ թէ՛ նորերէն կասկածի ենթարկուած է⁷⁵: Ամէն պարագայի մէջ մեծ սխալ մըն էր, հակառակորդին կողմէ Հոռոմի քաղաքական պայմանաւորումներու պարտաւորելի յանձնառութիւն մը ապահովելէ առաջ՝ մարտագիրը ձեռնհաս ընելը: Կորբուզոն կը կարծէր, թէ պիտի կարենար, ինչպէս 57 ին, զինուորական ցոյցով մը քաղաքական որոշիչ յաջողութիւն մը ձեռք բերել եւ հարկ պիտի չըլլար իրական ճակատամարտ մը մղել⁷⁶: Սակայն եւ այնպէս իր ամբողջ վարմունքն այն ատեն միայն հասկանալի պիտի ըլլայ, երբ ընդունինք թէ ունէր պատճառ համարելու, որ կառավարութիւնը դեռ միշտ իրրեւ վերջին նպատակ կը դիտէր, Հայաստանի ազդեցութեան Հոռոմի եւ Տրդատի միջեւ բաժանումը՝ այն կերպով, ինչպէս իրականացաւ երկու տարի յետոյ: Միայն այս պարագային կրնար յուսալ, որ դաշնագրութիւնը եւ ինքրական երկրամասին պարպումը, վճռատու ատենին հաւանութեան պիտի արժանանար:

Այս մեկնութեան ստուգութիւնը կը հետեւի անուղղակի այն մեծ դժուարութիւններէն, որոնց կը բախինք որ եւ իցէ ուրիշ մեկնութեան մը պարագային: Կլաւիոս Ռուփոս ստիպուած է այս նշանաւոր մարդուն շատ անպատշաճ շարժումներ վերագրել⁷⁷: Բաւական շարժումից չեն կրնար համարուիլ ո՛չ նախանձը կապաղովկեան իր պաշտօնակցին հանդէպ, որուն պատերազմի մէջ ստորակարգեալ դեր մը միայն վերապահուած էր, եւ ո՛չ ալ պարթեւական մարտին ծանրութեան երկիւղը, քանի որ այս կոիւրը, մարդկորէն դատելով՝ մանաւանդ

⁷⁵ Տակիտ. Տ. Ժե. 6 (Կլաւիոս Ռուփոսի համաձայն), Schiller 142, Հոռոմ. Պատմ. Ե. 388. Հ. Ներոն 182:
⁷⁶ Տես վերը յօդ. 1:
⁷⁷ Տակիտ. Տ. Ժե. 6:

թէ նոր մեծագոյն յաջողութիւն մը հասնական կ'երեւցնէր: Տրդատի անկարողութիւնը եւ այդ իսկ պատճառաւ հայ բանակ սպառնացող վտանգը, զոր կը տեսնէ շատ արդիւնաւոր⁷⁸ դահլուցիչ մեկնութիւն մը: Զինուորական միջոցներէ աւելի քաղաքադիտականներն նախապատիւ համարելու Կորբուզոնի քաղաքադիտութեան նկարագրական մէկ յատկութիւնն է: Կառավարութիւնն ասկէ ծագած սխալն անմիջապէս ուղղած է, առանց վաստակաւոր զօրավար վրայէն իր վստահութիւնը բառնալու:

Հոռոմ՝ պարթեւական մարտին սկսած լալուն իրական լուրին վրայ, անյապաւիր կամապաշտ Սուեթոնիոս Պաւլինոսի 61 տարեոյ կարգաւոր հիւպատոսներէն մէկ Պ. Պետրոնիոս Տուրպիլիանոսը նշանակելու որ մեծ յաջողութեամբ՝ ընդարձակ տարածումի մը ձգտող շարժումներուն սեղմումը դժուարին գործը ի գլուխ հանեց⁷⁹: Ինչպէս միւս հիւպատոս՝ Կեսենիոս Պետոսը Պարթեւներու դէմ Կորբուզոնի ընկեր կարգադրութեամբ հարաւային Հայաստանի ուղեւորելիքներու հրամանատարութիւնը եւ հոն տեղուած բանակները պիտի ստանձնէր:

Այս միջոցիս է որ կը հասնէր Հոռոմի նազարանի եւ Հայաստանի պարպումը լուրը. հետեւութիւններն իսկոյն կանխատեսուեցան եւ որոշուեցաւ ըստ կարի զանաւորելիք: Հայաստանը իրրեւ գրաւ ձեռնահանուէլէ յետոյ՝ անընդունելի էր զարշի առաջարկը, որով հայ Արշակունիքին Հոռոմի պետութեան հանդէպ աւատարմաւորութիւն մէջ պիտի մտնէին: Զինուորական արժանապատուութեան պատճառներով հրաժեշտ էր նախապէս երկրին վերադարձումը, վասն զի ասով միայն նոր ենթակումը իրական բովանդակութիւն պիտի նենար: Գուցէ նոյն իսկ պէտք պիտի ըլլար քաղաքի վրայ տարուած յաղթանակի Պարթեւներուն Հոռոմի գերիվերոյութիւնն ակնյայտին հանդիսացնելու համար: Ուստի Պետոսի արուեցան՝ երկու ոչ-լիարժէք բեւեւան լեզէոններու կից, Մէօզիոս սարմատական կոիւններու մէջ փորձուեցաւ Ե. Մակեդոնականը եւ Հայաստանը վերադարձուցաւ:

⁷⁸ Ներոն, 182. Տրդատի հոռոմէական կառավարութեան ձեռք բերուած եւ պիտանի գործիք մըն է ասու վերը յօդ. 2:
⁷⁹ Տես վերը յօդ. 2:
⁸⁰ Տակիտ. Տ. Ժե. 6:

զրաւելու եւ նահանգի վերածելու հրահանգով փութով դէպի արեւելք ճամբայ հանուեցաւ⁸¹:

Ասով ըստ երեւոյթին արեւելեան քաղաքականութեան վերստին նոր նպատակակէտ մը կը դրուէր⁸². սակայն այս միայն արտաքին երեւոյթն էր, իրականին Պետոս ալ գիտէր, թէ Տրդատի անձին հետ կապուած լուծումը, որ այժմ այնպէս սաստկութեամբ կը մերժուէր, ի վերջոյ ամբողջ իրադարձութեան յետին հանգրուանը պիտի դառնար: Վասն զի ինքն ալ, պաշտօնի անցնելէ քանի մը ամիս յետոյ, նոյն հիման վրայ դաշինք մը կուեց, ուրեմն անշուշտ կը կարծէր թէ կառավարութիւնը այսպիսի համաձայնութեան մը բացարձակապէս հակառակ չէր⁸³: Իմ կարծիքովս նոր կուսակալին տրուած հրահանգը բոլորովին այլազգ մեկնելու է: Կառավարութիւնը անով կը ճանչնար՝ Կորբուզոնի կատարած Տրդատի դահլուցիցութիւնը, բայց վերագրուած երկրին վրայ վերջնական որոշումը իրեն կը վերապահէր: Մշակոյթէ այնքան զուրկ աշխարհի մը մէջ նոր նահանգ մը կատարեալ անդորրացումէ յետոյ կարելի էր յանձնել թէ՛ աւատառու իշխանի մը եւ թէ՛ կուսակալի մը: Հոռոմ սովոր էր Ասիայի մէջ այսպիսի երկիրներու վրայ անուղղակի վարչութիւնը նախապատիւ համարել, ուստի եւ Պետոսի տրուած հրահանգը որ եւ է կերպով չէր կանխեր երկրին իշխանութիւնը Տրդատի յանձնելու հնարաւորութիւնը:

Դեռ 61 ի աշնան, եթէ կարելի էր, պէտք է գրաւուէին այն գերքերը, ուսկից դարնան Կորբուզոն Պարթեւներուն այնքան ազդուապէս սպառնացած էր⁸⁴: Կորբուզոն իր երեք լեզէոններովն անմիջապէս եփրատն անցաւ եւ ձախ եզերքն ամուր բանակ դրաւ, որ կայուն կամուրջներով հոռոմէական զետեղրին հետ կապուեցաւ. ասով միայն ի վիճակի եղան 62 ի դարնան, առանց նկատի առնելու եփրատի բարձրանալը, պարթեւ բանակին դէմ Միջագետքի մէջ յարձակողականը սկսելու⁸⁵:

⁸¹ Տակիտ. Տ. Անդ. Ժամանակագրութեան մասին տ. Klio ԺԹ:
⁸² Հէնաբըսըն, Ներոն, 182, այս ըմբռնումէն վերուած է:
⁸³ Տես քիչ մը վարը:
⁸⁴ Ժամանակագրութեան համար տ. Klio ԺԹ:
⁸⁵ Տակիտ. Տ. Ժե. 9. Հոս ինչիւրն Կորբուզոնի հաւատարմին պէս պաշտպանողական զիւրք մը գրաւե-

Պետոսի վիճակուած էր իր ձեռքն եղած երկու լեզէոններով անյապաղ Ծոփքէն եւ Տաւրոսի կիրճերէն անցնելով Տրդատնա-կերտ փութալ, որպէս զի Պարթեւներէ յառաջ այդ կարեւոր ուղեփակ ամբուլութիւնները հասնէր: Բայց հոս արդէն առաջին անգամ ի տես բերաւ նա իր անկարողութիւնը. վասն զի հարաւ-արեւմտեան՝ պատերազմէ ինչոքուած՝ նահանգներու մէջ աւարառութեամբ եւ յափշտակութեամբ այնքան երկար զբաղեցաւ, որ Տրդատ գինքը կանխեց: Ուստի ստիպուած Արածանայ հովիտը քաշուեցաւ եւ հոն ալ ձմեռեց⁸⁶: Տաւրոսի բարձունքին վրայ առաջապահ մը հաստատելով կը կարծէր թէ ամէն անակնկալներէ ապահովուած էր, եւ իր բանակը Սամոսատի ու Ռանդէայի քովերն այնքան անյարմար տեղաւորեց, որ լեռներու վրայէն յառաջացող թշնամի դուռը մը պէտք է որ՝ հայրենիքի հետ ունեցած յարաբերութիւնը խզէր⁸⁷: Մէօզիայէն օգնութեան առնուած իր նոր կերթ դուռը դարնան միայն կրնար տեղը հասնիլ եւ ձմեռն Պոնտոս անցուց⁸⁸:

Աշնան արշաւի ծրագիրը մասամբ միայն յաջողած էր եւ 62 տարեոյ մարտին նախապայմաններն աւելի աննպաստ դարձած էին: Թէեւ Կորբուզոն իր յարձակող բանակովը մտադրուած զիրքերը հասած էր, սակայն Տրդատնակերտ Պարթեւներու ձեռքն ինկած, եւ հարաւային Հայաստանի պաշտպանողական զիւրք Տաւրոսի կրճերուն վրայ ետ մղուած էր: Այս պարագաներու տակ հիւսիսային բանակն իսկ ստիպուած էր իր արշաւն սկսիլ հզօր բանակէ մը պաշտպանուած Տրդատնակերտի բերդին վրայ յարձակողականով մը, որուն յաջողութիւնը՝ դուռնուրուն մէկ մասին անարժէքութեանը պատճառաւ անապահով էր: Այսպէս ուրեմն Պետոսի յանցաւոր անհոգութիւնը պատերազմի ծրագրին հիմունքները վտանգած էր:

Վաղարշ լաւ գիտէր թէ, Կորբուզոնի հայկական կոիւններու մէջ մարդուած լեզէոններու յարձակողականը, հակառակ հիւսիսային ճակատին վրայ այս տեղական ճակողութեան, կոիւր դարձեալ ի նպաստ

լու վրայ չէր, այլ յարձակողականի մը պատրաստութեան հարց էր:
⁸⁶ Տակիտ. Տ. Ժե. 8. Իր յառաջխաղացումին ծրագրին Կորբուզոնին էր, բայց նա անոր զործադրութեան անատակ էր:
⁸⁷ Տես Հէնաբըսըն J. Phil. 28, 271 յջը:
⁸⁸ Տակիտ. Տ. Ժե. 10:

